

8032



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«19» 07 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 137 - 24

Նախաձեռնող՝

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ  
Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18

Գործունեությունը՝

110 կՎ «Ագարակ» օդային գծի տեղափոխում  
«ԶՊՄԿ» ՓԲԸ-ի տարածքից և 220 կՎ օդային  
գծի կառուցում  
Սյունիքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 137 - 24

«19» հուլիսի 2024թ.

Սյունիքի մարզի 110 կՎ «Ագարակ» օդային գծի տեղափոխում «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի տարածքից և 220 կՎ օդային գծի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ  
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Բ կատեգորիա/  
Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Քաջարան համայնք

**Ներածական մաս.** Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն նախատեսում է «Ագարակ» 110 կՎ ՕԳ-ի տեղափոխումը բացահանքի տարածքից՝ իրականացնելով գոյություն ունեցող հատվածի ապամոնտաժում: ՕԳ-ի տեղափոխումը նախատեսված է գոյություն ունեցող NN18-32 հենարանների հատվածում, ինչպես նաև նոր 220 կՎ ՕԳ և ենթակայանի կառուցում:

«Մեղրի 1» 220 կՎ ՕԳ-ի միացումը «Քաջարան» 220/110/10 կՎ ԵԿ-ին իրականացվում է մուտք և ելք սխեմայով՝ կառուցելով երկշղթա օդային գիծ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախագծի նպատակն է ապահովել «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին հուսալի և անխափան էլեկտրամատակարարմամբ: Նոր 220 կՎ օդային գծի կառուցումը հնարավորություն կտա թեթևացնել «Չանգեզուր» և «Դավիթբեկ» 110 կՎ օդային գծերի ծանրաբեռնվածությունը:

Ապամոնտաժվող հատվածը հիմնականում կառուցված է 110 կՎ «Սևան» տրոսի հենարաններով: Ապամոնտաժվող հատվածի երկարությունը 2626.0 մ է: Ուղեգծի սկզբը





(ՊԿ0+00) համարվել է գոյություն ունեցող ՕԳ-ի N32 110 կՎ «Սևան» տիպի հենարանը, իսկ վերջը՝ (ՊԿ30+07) N18 110 կՎ «Սևան» տիպի հենարանը: Ուղեգիծը անցնում է լեռնային լանդշաֆտով՝ բացարձակ նիշերը տատանվում են 2137.0մ-2405.0 մ սահմաններում: Նախագծվող ՕԳ-ի ուղեգծի երկարությունը 3007.0 մ է: Թռիչքներում ապահովված է միջֆազային հեռավորությունները: AC-150/34 հաղորդալարի շինարարական երկարությունը 2000 մ է, թռիչքներում հաղորդալարերի միացումը նախատեսված է COAC-150-3 տիպի սեղմակներով: Հաղորդալարերի համար վիբրացիայի տատանամարիչներ չեն պահանջվում քանի որ, տարեկան միջին ջերմաստիճանի դեպքում հաղորդալարերում մեխանիկական լարումները չեն գերազանցում  $4.0կգ/մմ^2$ : ՕԳ-ի շանթապաշտպանությունը նախատեսված է 1 հատ C-50 տիպի ճոպանով (նախատեսված հենարանների կառուցվածքից ելնելով):

ՕԳ-ի կառուցման համար նախատեսված են տիպարային մետաղական հենարաններ՝ ընդհանուր 20 հենարան (9 հատ միջանկյալ և 11 հատ անկյունային): Ուղեգծի առավել թեք լանջերում, հողային աշխատանքները հնարավորինս փոքրացնելու նպատակով, նախատեսված են երկշղթա հենարաններ՝ առանց 3 հատ փոքր լայնակների (հենարան NN11, 14, 20): Ուժեղ քամուց, պահող շարանների թեքմամբ պայմանավորված, հաղորդալարի և հենարանի կոնստրուկցիայի միջև թույլատրելի եզրաչափը ապահովելու համար, նախատեսված են ՍՇ110- 9B տիպի միջանկյալ հենարաններ:

Ուղեգծի հիմնական մասն անցնում է «Ջանգեղուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին պատկանող տարածքով: Օդային գծի շանթապաշտպանությունը պետք է իրականացվի OPGW(օպտիկամանրաթելային մալուխ ներկառուցված շանթապաշտպան ճոպանում) տիպի ճոպանով՝ մուտք-ելք սխեմայով:

«Մեղրի 1» 220կՎ ՕԳ-ի հաղորդալարը AC-400/51 տիպի է: Շաթապաշտպանությունը իրականացված է OPGW օպտիկամանրաթելային մալուխով՝ ներկառուցված շանթապաշտպան ճոպանում:


«Մեղրի 1» ՕԳ-ի խզումը նախատեսված է երկշղթա 220կՎ «Մեղրի 1,2» ՕԳ-ի N110/N112 և N111/N113 երկշղթա խարսխաանկյունային հենարաններից (N110/N112 և N111/N113 խարսխաանկյունային հենարանների միջև թռիչքի երկարությունը 92մ է):

OPGW ճոպանի խզումը նախատեսված է «Մեղրի 1» ՕԳ-ի N111/N113 հենարանի վրա:

N110 և N111 հենարաններից, «Մեղրի 1» ՕԳ-ի հաղորդալարերը, համապատասխանաբար՝ 135 մ և 82 մ թռիչքներով, մոնտաժվում են նախագծային N1 Y220-2T+14 հենարանին: N1 հենարանից մինչև ԵԿ-ի պորտալները նախատեսված է երկշղթա հատվածի կառուցում: Երկշղթա հատվածի երկարությունը 1972 մ է: Մեղրի 1 ՕԳ-ի մուտքի երկարությունը, գոյություն ունեցող N111 հենարանից մինչև ԵԿ-ի մուտքի պորտալ (ուղեգծի առանցքով), կազմում է 2055.0 մ: Մեղրի 1 ՕԳ-ի ելքի երկարությունը, գոյություն ունեցող N110 հենարանից մինչև ԵԿ-ի մուտքի պորտալ (ուղեգծի առանցքով), կազմում է 2105.0 մ:

Նախագծվող երկշղթա ՕԳ-ի հաղորդալարն ընդունված է պողպատալյումինե AC-400/51 տիպի՝ համանուն «Մեղրի 1» ՕԳ-ի հաղորդալարի: Թռիչքներում ապահովված է միջֆազային հեռավորությունները:

AC-400/51 հաղորդալարի շինարարական երկարությունը 1500մ է, թռիչքներում հաղորդալարերի միացումը նախատեսված է CAC-500-1 տիպի սեղմակներով: Շեղման հաղորդալարերի միացումը նախատեսված է ՊԱ-6-1 տիպի սեղմակներով (երկուստեղծ սեղմակ յուրաքանչյուր միացման համար):





ՕԳ-ի կառուցման համար նախատեսված են տիպարային մետաղական, ցինկապատ երկու ճապանականգնակով 6 հատ հենարան՝ որոնց թվում 5 հատ արսխաանկյունային տիպի և 1 հատ միջանկյալ:

- Երկշղթա խարսխաանկյունային Y220-2T+14 տիպի – 3 հատ (N1, 5, 6),
- Երկշղթա խարսխաանկյունային Y220-2T+5 տիպի – 2 հատ (N2, 4),
- Երկշղթա միջանկյալ ՈՇ 220-6T+1.8 տիպի –1 հատ (N3) հենարանների պատրաստման համար պողպատի մակնիշը ընդունված է C345 (09Г2С) ԳՈՍՏ 27772-88:

Նախատեսվում է կառուցել 110/10 կՎ ենթակայան 40 ՄՎԱ նախագծային հզորությամբ: Ենթակայանը հավաքավելու է բլոկ-մոդուլային տիպ 110 և 10 կՎ փակ բաշխիչ սարքերի (ՓԲՍՅՄ) համար, փակուղային կատարմամբ: Ենթակայանը աշխատելու է հեռակառավարմամբ:

- Ենթակայանի սնուցումը 110/10 կՎ 40 մՎԱ, կՎ ՓԲՍ-ին (ՅՄՄ) միացման միջոցով 110 կՎ ենթակայանին (ՓԲՍ) 220 կՎ, 125 մՎԱ. երկշղթա ՕԳ 110 կՎ (մոտ 500 մ):
- Երկու 110/10 կՎ ուժային տրանսֆորմատորների տեղադրում՝ յուրաքանչյուրը 40 ՄՎԱ հզորությամբ, բաց տեղադրմամբ, յուղային:
- Որպես բարձրավոլտ բաշխիչ մոդուլ -110 կՎ (110 կՎ էլեգազային անջատիչով բջիջ), որը տեղակայված է բլոկ-մոդուլային ՓԲՍ-ում:

Շինարարության տարբեր փուլերում շահագործվելու է տարբեր տեսակի շինտեխնիկա:

Հողային աշխատանքներ իրականացնելու արդյունքում հանվելու է 3080 մ<sup>3</sup> հողային զանգված, որից 2772 մ<sup>3</sup> օգտագործվելու է որպես հետլիցք: Մնացած՝ 308 մ<sup>3</sup> մասը փոսորակների լցման և տարածքի հարթեցման համար:

Աշխատողների խմելու կարիքների համար օգտագործվելու է բերովի ջուր:

Կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբամանների մեջ (տարածքում տեղադրվելու է 1 աղբաման՝ ըստ յուրաքանչյուր հենարանի) և տեղափոխվելու է աղբավայր

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած տեսակներ չեն արձանագրվել, գործունեության ենթակա տարածքում պատմամշակութային հուշարձանները բացակայում են:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- Հողային աշխատանքների ժամանակ հողի բերի շերտը կհանվի, կպահվի դրանց համար նախատեսված հատուկ տարածքներում և կօգտագործվի հետագա ռեկուլտիվացման աշխատանքների համար:

- Արտանետվող վնասակար նյութերի քանակը նվազեցնելու նպատակով մեքենաների վրա նախատեսվում է տեղադրել կատալիտիկ ֆիլտրներ:

- Տեղում չի նախատեսվում բետոնի շաղախի պատրաստում, հիմքերի կառուցման համար, բետոնը բերվելու է պատրասի:

- Փոշեգոյացումը նվազացնելու նպատակով նախատեսվում է չոր և շոգ եղանակներին իրականացնել ջրցանում:





- Հանվող գրունտների մեծ մասը օգտագործվելու է որպես հետլիցք, մյուս մասը փոսորակների ցման և տարածքի հարթեցման համար:

Աշխատանքների իրականացման ընթացքում իրականացվելու է մոնիտորինգ՝ ընդհանուր արժեքը երկու ՕԳ –ի համար կկազմի 700 000 հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության ընթացքում, Սյունիքի մարզի Քաջարան համայնքում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների և մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման ընթացքում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### **Փորձաքննական պահանջներ**

-Աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

-Բոլոր շինարարները և հավաքակցորդները պետք է ապահովված լինեն տվյալ աշխատանքի համար անհրաժեշտ արտահագուստով, սաղավարտով, ակնոցներով:

-Շինարարական և մոնտաժային աշխատանքներն իրականացնել համաձայն գործող անվտանգության հրահանգների և կանոնների:

-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

**ԵՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ**



«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի 110 կՎ «Ագարակ» օդային գծի տեղափոխում «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի տարածքից և 220 կՎ օդային գծի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

h. Մեջ

Հովիկ Մեսրոպյան